26. ՔԱՉԱԼ ԱԽՊԵՐԸ

Իրեք ախպըրէր ըն ինո̈ւմ։ Ախպորցը կուճուրը քաչալ ա ինո̈ւմ։ Տահանց հա̈րը մըռնելիս տղորանցն ասում ա.— Ինձ վըեր թաղեք, իրեք օր հինգյիստիս ղարաղուլ կանեքյ։ Սո̈ւրթա̈ ո̈ւրո̈ւգյո̈ւնը մըեծ տղեն օչերդն ա ինո̈ւմ։ Քաչալ ախպըրէրը տրան ասում ա.— Քյինա̈ ղարաղուլ ըրա, տա թա կորի ուադ իլ, քաչալ, մըեռած մարթին կյուզուննա՞կան չըն հու Մըեծ ախպըրէրը վըեր քյինա̈մ չի, քաչալն ո̈ւրա̈ն փստոննի թո̈ւվա̈նգյը յոր ա օնում, ո̈ւրո̈ւգյո̈ւնը տանան տո̈ւս կյամ, քյինամ ըրեխնամ մին կա̈րմո̈ւր ծիյավուր կրակ վըեր ըծելավ երգյինքյան վըեր եկավ, հորը հինգյըստարանն ըսկըսավ քա̈նդիլը, Նհետն էլ ո̈ւչո̈ւնց տալը։ Թո̈ւվանգյը թուշ ա օնում, յիրա անում վըեր քցո̈ւմ, ծին յոր օնում, տանում մին թաքուն տըեղ կապում։ Էրկուինչի օրը մաշնակ ախպըրէրը պիտի քյինա̈ր, քյինամ չի։ Քաչալը թո̈ւվա̈նգյը յոր ա օնում, հղե ինո̈ւմ, քյինամ ըրեխնում մին բոզ[1] ծիյավուր երգյինքյա̈ն վըեր եկավ, ըսկսավ հորը կյիրիզմանը քանդիլը, Նհետն էլ ո̈ւչո̈ւնց տալը, թա տու վի՞ր, վըեր ախպորըս ըսպընեցեր։ Քաչալը թո̈ւվա̈նգյը յիրա̈ յա անում, տրան էլ ըսպանում, շորերը նան զենքերը յոր օնում, ծին տանում թաքուն տըեղ կապում։ Իրեքինչի օրեն ո̈ւրո̈ւգյո̈ւնը ո̈ւրա̈ն օչերդն ա ինո̈ւմ։ Թո̈ւվանգյը յոր ա օնում, քյինամ ըրեխնում մին սև ծիյավուր երգյինքյա̈ն կրակ վըեր ըծելավ վըեր ա կյամ, կյիրեզմանը քա̈նդո̈ւմ, ըսկսում ո̈ւչո̈ւնց տալը, թա տու վի՞ր, վըեր իմ ճոխտ

[1] Մոխրագույն (Ս. Կ.)։

ախպորս ըսպընեցեր։ Քաչալը թովանգը թուշ ա օնում, յիրա անում տրան էլ ըսպանում, զենքերը յոր օնում, ծին տանում թաքուն տըեղ կապում։

Մին քանի օր վըեր անց ա կենում, թաքավըերն ուրան երգիրին ազգուն չինիլներեն հըվաքում ա, ասում ա.—Քյինամ պիտիքյ էա՛հինչ ծովումը իրեք մըեծ օշափ կա, ըսպանեքյ, քշտըըրներեն իրեք հուրի-փարիններեն էլ ըղադեքյ, պիրիքյ։ Տահանց նհետ էտ էրկու ախպըերն էլ ըն քյինամ թաքավըերեն կոշտը։ Քաչալը ախպորցն ասում ա.—Լավ է՞, թուղեցեքյ ես էլ կյամ։ Տահանք թա՝ կորի քաչալ, քըզանա պեն չի տուս կյամ։ Վըեր տըեղ ըն հանում, լոխ զենքերը եր կալած քյինամ ըն վըեր ուշափեն ըսպանենե։ Մըեծ ախպըերն օղում ա ծովն անց կենա, կարում չի։ Քաչալը կարմուր ծին նստած կյամ ա թաքուն նի մննում ծովը, մին ուշափեն ըսպանում, ամենամըեծ քվորը յոր օնում, պիրում։ Մաշնակ ախպըերն էլ ա քյինամ, վըեչ մին պեն կարում չի անե։ Քաչալը բոզ ծին քշում ա, հանում ծովը, էն մին ուշափեն էլ ըսպանում, մաշնակ քվորը յոր օնում պիրում։ Քաչալն էտ հուրի-փարիններեն թաքուն տըեղ պահում ա, վըեչ մինն էլլա պենան խաբար չի ինում։ Տրանա հետը քյինամ ա ախպորցը կոշտը, ասում.—Ուշըփներեն ըսպանալ ըմ, հուրի-փարիններեն ըղադալ։ Տահանք ծիծաղում ըն։ Քաչալը քյինամ ա իրեք քվորն էլ թաքուն պահած տըեղան տուս օնում պիրում, մըեծ քվորը տամ մըեծ ախպորը, մաշնակը՝ մըշնակին, կուճուր քվորը նհետ էլ ինքը փսակվում։ Թաքավըերն էլ էտ ուշըփներեն ըսպընելի հետե տահանց մըեծ-մըեծ խըլըթնե յա անում, շատ փող, վըեսակե տամ։ Ախպըերքը մըեծ-մըեծ տներ ըն շինում, ուրանց հետե շատ տես-տեն ինքյ օնում, ըսկսում տըեղ լավ ապրելը։